Պարբերական և ըստ անհրաժեշտության մշտադիտարկման այցեր

Ազատությունից զրկման վայրեր կանխարգելման ազգային մեխանիզմի այցերը մշտադիտարկման բնույթի են և իրականացվում են անկախ բողոքների առկայությունից:

Որպես կանխարգելման ազգային մեխանիզմ Պաշտպանի՝ ազատությունից զրկման վայրեր այցելելու լիազորության անարգել իրացումն ապահովելու նպատակով սահմանել է ազատությունից զրկման վայրերի շրջանակը, դրանք են՝

1) ձերբակալված և կալանավորված անձանց պահելու վայրերը.

2) քրեակատարողական հիմնարկները.

3) հոգեբուժական կազմակերպությունները.

4) կայազորային կարգապահական մեկուսարանները.

5) ազատությունից զրկված անձանց տեղափոխելու համար նախատեսված տրանսպորտային միջոցները.

6) ցանկացած այլ վայր, որտեղ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի որոշմամբ, հրամանով կամ ցուցումով, նրա համաձայնությամբ կամ թույլտվությամբ անձը զրկվել է կամ կարող է զրկված լինել ազատությունից, ինչպես նաև ցանկացած այնպիսի վայր, որն անձը չի կարող ինքնակամ լքել առանց դատարանի, վարչական կամ այլ մարմնի կամ պաշտոնատար անձի որոշման կամ թույլտվության («Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 28-րդ հոդված, մաս 4):

Կանխարգելման մեխանիզմի աշխատանքի կարևորագույն սկզբունքներից են ազատությունից զրկման վայրերում կատարած աշխատանքի ընթացքում ձեռք բերած տեղեկության գաղտնիության պահպանումը, ինչպես նաև չվնասելու սկզբունքը: Կանխարգելման ազգային մեխանիզմի կարգավիճակի շրջանակում ձեռք բերված տեղեկությունները ենթակա են պաշտպանության, իսկ անձնական տվյալները ենթակա չեն հրապարակման, եթե առկա չեն օրենքով նախատեսված հիմքեր:

Այցերի կազմակերպման և իրականացման վերաբերյալ առավել մանրամասն տեղեկությունները ներկայացված են ստորև կցված փաստաթղթում: